


ՄԻՐԱՍ

# ՄԱՄԵՆ ՈՒ ԱՋԵՆ

891.99  
Ս-55

ՊԵՏԿՐԱՆ









174

891.99


U-55

պ

Ս Ի Բ Ա Ս

# Մ Ա Մ Ե Ն Ո Ւ Ա Շ Ե Ն

Քրդական ժողովրդական պահ



22

Պ Ե Տ Ա Կ Ա Ն    Զ Բ Ա Տ Ա Բ Ա Կ Զ Ո Ւ Բ Թ Թ Ո Ւ Ն  
Ք Ե Բ Ե Կ Ա Ն    1 9 3 4



31.07.2011

55396

Նկարները յիվ շապիկը Հովհ. Շավարշի



1340  
37

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան

Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանճյան

Սրբագրիչ՝ Հ Մանավազյան

Գլավիխտ 8626, պատվեր 1096, հրատ. 3059, տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 5 հուլիսի 1934 թ.

Ստորագրված է տպելու 23 հուլիսի 1934 թ.

Ե ն վոր տղայի սիրտը չմաշեց, են վոր ջահելի սիրտը չմաղկտաց են գիշեր:

Են գիշեր, պայծառ գիշեր, լուսնից ել լուս կոտար Աշեն, են գիշեր կարոտի գիշեր, խարույկից ել թե՛ ցուլ կուտար Աշեն:

Հպարտ եր նա իր հայրենի ժայռերի վերասլաց արծվի պես, խրոխտ եր նա հաղթանակող ասպետի պես. բարձր եր բոյը, ինչպես




չինարը և կախարդիչ իր նայվածքը թռչուններն հրապուրող ոճի պես: Թուխ դեմքը դրավիչ եր դարնան արեւի շողքից և դայրույթի պահին անխնա իրենց դաշտերին փչող հանկարծահաս մրրկի նման:

Եսպես եր Աշեն:

Մահալի մեջ մենակ Մամեն եր, որ կպալ Աշեյի սրտին, ինքն Վլ Մամեյի: Մամեն, Զողանի պահած Մամեն, ինչքան աղջիկների աչքը ջուր կտրեց Մամեն, ինչքանի ել քնահարամ արեց Մամեն:

Ու յերբ Մամեն տիրացալ Աշեյին նոր Զողանը հանդստացալ, պառնայած յերակններում յեռաց արյունն ու նորից աշխուժացալ իր ջահել որերի թափով: Կարծես եղ ել են Զողանը չեր, վոր տաս տարի աղայի տավարի աթարը կրեց, վոր գիշեր ու ցիւրեկ աղայի կանանց դարալաշ յեղալ, մինչև մեջքը թոնրումը ծռած՝ աղային բոյե-բոյ լավաշ թխեց ու իր գրտնակ թեվերն աղայի ձձումը զարկելով թոռեց, մինչև Մամեն բերան եկալ:

Քոան տարեկան Մամեն տասնութ տարեկան Աշեյի հետ ենպես սազական եր, որ յերկնուց սլացող գիշատիչ բազեն ել նրանց տեսնելիս բերնի վորսը թողնում եր ու մալուլ-մալուլ սիրողներին նայում, որ փրփրաբաշ նրժուլգն առջևի վորտքը զարկում եր գետնին ու իր մոլեգնած խոյանքը դադարեցնում նրանց շոյանքի ներքո:





Են քուրդն որ քրտնել եր Ձողանի պես,  
են որ Մամեյի Թայտաշն եր ու Աշեյի հետ  
Ջուր եր կրել աղբյուրից, — ենոնց վոխն արևի  
մեկ փաթ տվեց, մեկել որն ամենքն ել խնդա-  
ցին ու մխիթարվան Մամեյի ու Աշեյի բախ-  
տավորությամբ:

Դահար աղեն եր, որ չծիծաղեց, Դահար  
աղեն եր որ փրփրեց անսանձ ձիու պես: Նա  
տեսնում ե հիմի իր ղուլամի աղիքն ընկերա-  
ցած Աշեյի հետ. յերկուսով ել նրանք ավելի  
համարձակ են քան իր ամենակտրիչ իգլիթը:  
Ես են Աշեն չեր, որ մենակ՝ աջ բազկով ենպես  
հրեց Դահարին, որ մինչև հիմա ել գլուխը  
պտուտ ե գալիս: Ղուլամի թուլեն դիմադրել  
ե աղային, իգլիթի պես ինքն ե պաշտպանել ի-  
րան փախցրել փորձողների դեմ, — և ամեն-  
քից ատելությամբ ու կոպիտ նա վարվել ե  
իրա՝ ելի ամենամեծ աղայի, Դահարի հետ:  
Բա ել վոր որվա համար ե իր աղայությունը,  
որ ղուլամն իր առջևը կտրի, իր աչքը կտրա-  
ծին ձեռ դնի, — շատ ել Աշեն հաղթվել ե Մա-  
մեյից, շատ ել Մամեն տիրացել ե ելի փերուն,  
— չե որ ինքն աղա յե ու ամեն բարիք նախ  
ինքը պիտի վայելի:

Ու Դահարը հրամայեց ելի կտրիչներին հա-  
վաքվել ու ամենից առաջ Մամեյին կանչեց:

— Տեսնում եք ես արևը, — ասաց նա  
հպարտ ու հրամայող, — մինչև մեկ ել նա կանդ-  
նի ետեղ, դուք պիտի շեյիսի Ջավադի ղուլամ-





ների առաջի շարքումը լինեք, որ զիրանցինե-  
րին մանրեք, ա՛յ, թո՛նրից քաշած են փոշու  
պես: Դե շարժվեցեք (սողեն՝) ձեզ ջոմակ:

Ազի հրամանն ու կամքն եր, անառարկելի  
որենքը և Մամեն տուն դարձավ կոտորած սըր-  
տով:

Են բազեյի պես սուր ու կրակոտ աչքերից  
ցողեց յերկու կաթիլ արցունք,—չե, ասեց հետո  
Մամեն իր մտքում,—թող Աչեյի ու Դայեյի<sup>2)</sup>  
սիրտը չկոտրի,—ծիծաղեց ուրախ ու ասաց.

— Աչե, քու թևին ել դվաթ տուր, որ  
նա Մամեյի քոլոզը դիք պահի,— ու համբու-  
րեց Աչեյի տրամած յերեսը, դգվեց նրա մինչև  
եդ չխոնհարված աչքերը:

— Դիյա մա,—ասեց նա մոռը գիրկն առնե-  
լով,—դուլամի պարտքն ե, պիտի տամ: Աչեյի  
սիրտը տես, չկոտրի, քու մազերն ել սև տես-  
նեմ...

Ու յերբ Մամեն իր ձիու մեջքին ճամբեն  
կչափեր,—Դահար աղեն թեթև սրտով լմե-  
թի<sup>3)</sup> նստավ, Աչեն ու Զոզանն ել մեկ-մեկի  
սիրտ չկոտրելու համար կոկորդում խեղդե-  
ցին վարարող արցունքները:

1) Աստված

2) Մայր, մայրիկ

3) Աղոթք





Յոթ տարին բուրեց-յոթն անգամ չորս-  
 ցավ ուռին ու յերբ ուղեց յոթերորդ անգամ  
 դալարել, Աշեն մալուլ-մալուլ գարնան կարո-  
 տով պապակեց իր Մամեյին: Դահար աղեն  
 քառասուն տեսակ ջուհար դրկեց, քառասուն  
 տեսակ խոստում արեց, քառասուն ձևի ել փախ-  
 ցընելու փորձ արեց, —ամա Աշեն են Աշեն եր,  
 որ աղի բերանն սկի վոսկոռ ել չգցեց, որ  
 իգիթի պես հպարտ մնաց ու Մամեյի քոլոզը  
 դիք պահեց, Ջողանին սիրտ ավեց, նրանից  
 սիրտ առավ ու իրանց ճակատի քրտինքը թա-  
 փելով նամարդին մուխտաջ չեղան:

Աշեն, պայծառ Աշեն, լուսնի պես բուր-  
 րակ Աշեն փանջարեն<sup>1)</sup> ելավ իրիկվա հովին,  
 թիկնեց, յերկու ասիերի մեջն առավ արևից  
 կարմրած թշերն ու երկեն ճամբեն նայեց:

Ես են ճամբեն եր, որ տարավ Մամեյին,  
 ես ճամբով եր, որ որեն հազար մարդ  
 կերթար ու ենդուց ել ավել հետ կդառնար  
 ու ամեն որ Աշեն ջուհար կհարցներ իր Մա-  
 մեյից:

Հիմի ի՛լ չափ դցած գալիս ե են բող ձիա-  
 վորը, քրտինքը թրջել ե նրա ճակատը ու բա-  
 րակ արխալուղը ֆռռում ե քամու առաջ: Նա  
 արդեն մոտեցել ե փանջարին ու ոտար ոտար  
 նայում ե: Աշեյի սիրտը թրթռաց պատուտակը

1) Լուսամուս





պատող կոկոնի պես ու նա ձեռքը շարժելով  
ասաց:

— Հասարո, արի տեսնեմ ո՞վ ես, ով չես,  
իմ Մամեն ես ա յոթ տարի զինվոր ա, արի  
մեր հացը կտրի, թե ջուհար ունես՝ լավ, թե  
չէ՝ ճամբեդ հաջող:

— Հացդ անպակաս լինի ըռնդո՞՞) . յես  
իշավ՝) քո ջանի մեյվանն՝) եմ, — եսպես պա-  
տասխանեց են ձիավորը:

Յոթ տարվա մեջ ես մեյվանն ամենքից հա  
մարձակն եր, — Աչեն չն՝ ղացավ նրա խոսքե-  
րից, դուրս վազեց, փնչացող նժույզի սանձը  
բռնեց ու յերբ ձիավորն իջավ, ձին տարավ ա-  
խոռը, կապեց և խոտ ու գարի տվեց:

Ու յերբ յեռ յեկավ՝ օտարականին իր ո-  
ղեն առաջնորդեց, նա ել թվանքն ու թուրը  
պատից կախեց, ու մեկ ել որ ձեռքը տարավ  
երկեն քոռլըը հանելու, թաց գլուխը շփելու  
համար, Աչեյի սրտին լեռնացած յոտ տարվա  
կարոտը հորդեց գարնան դեռի պես ու նա  
նույն թափով ընկալ տղայի գերկը:

— Վայ դու անհոգի Մամե, ես ինչ Փան-  
դով տուն կուզաս:

— Բա ո՞վ կարող եր քո ջանին մեյվան լի-  
նել, հա՞ իմ իզիթ հարս:

1) Ձիավոր:

2) Գեղեցկուհի:

3) Ես գիշեր:

4) Էյուր:





Եւ Աշեն մնաց Մամեյի դռչին, Մամեն եւ նրա գլուխը գրկեց ու քաղցր համբույրներէ տակ մոռցան յոթ տարւա տանջանքն ու ցավերը:

— Աշե ջան, դե գնա դայեյին եւ իմաց տուր, վոր դա սոյբաթ<sup>1)</sup> անենք, — ասաց Մամեն:

— Այո, Մամե, — մղկտաց Աշեն, — դայեյի թող ես գիշեր հանգիստ քնի, լուսուն<sup>2)</sup> սոյբաթն արա, հիմի կաթ ու մածուն բերեմ, ուտենք, խմենք իրար վայելենք...

Մամեն դեմ չխոսեց, Աշեյի տեսքը կշտացրել էր նրան, մի քիչ կաթ խմեց, վտաքերը լվաց և ապա լուսնի շողերի տակ գրկեցին իրար ու մտան անկողին...

Աղոթրանն որ ճկճկալեն բացվաւ Զոզանը տեղից վեր ելաւ. յերեք անգամ սրտի խորքից ծանր «ախ» քաշեց, յերեք անգամ գլխով դբլեյին<sup>3)</sup> վողջունեց յերեք անգամ եւ «խողե» կանչեց:

Եդ Մամեյի կարտոն էր որ կմաշեր դայեյին: Յոթը տարի Զոզանն եւ դարդը ներս գցելով սպասում էր Մամեյին, յոթը տարի սիրտ էր տալիս են թառլան Աշեյին, որ ենպես մալուլ, որ ենպես կարոտով՝ մուրազը կես արած դարբեդար Մամեյին կապասեր:

1) Խոսենք:

2) Առաջտի իմաստով:

3) Հարավ, աղոթքի կողմ:





Նրա պառաւ յերակներում արշունը դեռ  
առույգ էր վազում, դեռ թեւերը պահել էյին  
իրենց զորութունը, Զոզանն էլ ուներ իր մու-  
րազը վոր ամեն ագամ նրա սիրտը կգաղեր,  
յերբ կնայեր Աշեյի բոյ-բուսին:

Յերբ անկողինը ծալեց իրար վրա, Զոզանը  
բուխերիկին մոտեցավ. ենտեղ էր ամեն որ Ա-  
շեն ջրով լեք իբրութը դնում, որ Զոզանը  
լմեժի նստեր, որ ջերմ սրտով խողեյից Մա-  
մեյին բարի վերադարձ ու իրենց համբերու-  
թյուն խնդրեր:

— Վայ, Աշե, — գլուխն որորեց Զոզան, —  
մտահան ես արեւ, հա՞, դնամ իչ չենեմ<sup>1)</sup> ըսնդս  
ջան... յարար ի՞նչ դառն միտք ա յեկել գըլ-  
խիդ, որ յոթը տարվա մեջ չմոռցած գոր-  
ծըդ ետը մոռցար...

Եսպես խոսեց ինքն իրեն Զոզանն ու յերբ  
սաղրից<sup>2)</sup> ներքե իջավ, գնաց գոմն իբրութը  
փնտրելու՝ ականջին հասավ ձիան խրինջոց:

Զոզանը կանգնեց:

— Ես ինչ կլսեմ. սատանի փոճանք ա...  
չե, ձի յա ու ձիավարի էլ խրինջում ա...

Զոզանը դեյրի փեշով սրբեց աչքերը, գո-  
մի յերգիկից արեւի առաջին շողքը ներս էր ըն-  
կել ու ամեն որվա դատարկ մսուրի դիմաց  
պսպղում էր բող ձիու հպարտ գլուխը...

— Վայ Աշե, — ելի խոտեց Զոզանը, — հպա



1) Ձեմ մեղադրում:

2) Թախտ:



մեյվան դա դայեյին իմաց չեն տա... ինչի՞  
յես մեյվանի պատիվ մոռցեր եմ, ինչի՞ յես իմ  
քար ու քոլ ընկած Մամեյի սաղաղին գլխիս  
վրա չեյի՞ դնի մեյվանին... վայ Աչե, վայ  
բայեմն վայ...

Ու Ձողանի վտաքերն ուժ առան, յոթ տար-  
վա մեջ առաջին անգամ մոռացավ լմեժն ու  
վաղեց հողեն, են հողեն, ուր Աչեն յոթը տարի  
մենակ իր Մամեյին նր սպասել:

Ձողանը դուռը բացեց ու ներս մտավ:

Արևի մի շողք ել ետեղ եր ներս ընկել,  
սփռվել անկողնի վրա...

Ձողանը մեկ ել ծմրկտաց ու ճմռեց աչքե-  
րը...

— Ես ինչ ե... թե ձին փորձանք չեր սա-  
տանի, ես ել չե...

Աչեն պառկած ե, կողքին ել ջահել տղա.  
ին ինչ ել կարոտով ե գրկել Աչեյին, մինչև ար-  
մունկը քշտված առնական թևը փաթ ե արել  
Աչեյի վզով ու յոթը տարվա մեջ չխոնարհած  
գլուխը զարկել ե դռչին, ու ինչ ել անուշ քնի  
մեջ են...

— վայ Աչե, վայ. քո նամուսն իմալ  
նամուս ս, իմ աչքի լուսով պահած Մամեն,  
իմ բրինդար՝ Մամեն, ես ա յոթը տարի դարի-  
բություն ա գացել, հպա քո նամուսն իմալ  
նամուս եր, Աչե ջան, որ դու յոթ տարվա ուխ-

1) Կիրավոր





սը խախտեցիր, որ դու Մամեյի քուղը ծնեցիր, որ դու ջահել տղին ծոցդ առար...

Ու Ջողանի յերակները պրկվեցին ջահել որերի թափով ու Ջողանի յերակներում արյունը յեռաց վարսրեց ու նա խոյանքով հասավ պատը. ենտեղ էր մեյվանի ասպապը, ենտեղ էր մեյվանի մուրագով սրբած մաքրած այնալուն:

Ջողանը փութով ձեռն առավ այնալուն, ու նրա վիրավորված հոգուց ուժ ստացած ձեռքերում այնալուն որորաց թեթե վոստի նման: Մաժեց մեկ անգամ լուրն, փողը դեմ արեց Աշեյին հրապուրող մեյվանի ճակատին:


— Իգիթ տղա յե, — ասեց, — ճակտից պիտի դարկեմ....

Ասեց ու կանգ առավ:

— Չե, Աշե ջան, չե, եսպես չեղնի, այնալուն ձեն կը հանա, գեղ հարեան կիմանա, Դահար աղեն կը լսա սիրա կը հովնա, քո յոթ տարվա պայծառ պահած անունն, Աշե ջան կը կոտրի, իմ Մամեն լե կուզա կիմանա, կը հըռկի,<sup>1)</sup> ու սիրա լե կը կոտրի...

Ու այնալուն ելի հետ տարավ, ելի կախեց պատից:

Հետ դարձավ, տեսավ, որ մեյվանն շտապելուց խանչալը թողել է բարձի կողքը, թրուով՝ վերցուց, պատյանից հանեց կեռ, պսպրղան խանչալն ու թափ տվեց Մեյվանի գլխավերև:





— վայ թե ուժս պակսել ե, հա՞, մեկ զարա  
կով վայ թե չսպանեմ չե՞, Աչե ջան... ես թա-  
վուր իգիթ տղեն կմեռնի՞ պառավ Չոզանի  
մեկ զարկով... չե, վայ թե սաղ մնա... ձեն  
եյնի, խալխն իմանա, Աչեյի անունը կոտրի,  
Մամեն լե դա, լսա, ըռըկի, սիրտ լե կոտրի...  
Խանչալն ել հեռ դրեց պատյանը...  
Չահեղները դեռ անուշ յերազի մեջ եյին...  
Մեյվանի չրթունքները բաց ու խուսի եյին  
անուժ:

Ո՛հ, Աչեյի համբույրը, բոցոտ ու այրող  
համբույրը դուր ե յեկել մեյվանին ու մեյվանը  
յերազի մեջ ել չի դադարում համբուրելուց  
Չոզանի մուրազով պահած հարսին...  
— Չե, ասաց Չոզանը, — պետք ե շոտպել,  
հիմի կզարթնեն ու են ժամանակ ուշ կլինի...  
Ու ելի թռավ Չոզանը դեպի մեյվանի աս-  
պապը, քաշեց դուրս բերեց յերկեն թուրը:  
— Ես հարմար ե, — ասեց, — ես դոչը  
կմտնա ու թիզ մեկ դոչակից դեն կնցնի... Չեն  
չեյնի, խալխ չիմանա, Դահարի սիրտը չի հո-  
վանա, Աչեյի անուն չկոտրի, Մամեն լե չհոկի  
ու սիրտ լե չկոտրի...  
Ու նորից պրկվեցին Չոզանի թևերը, նո-  
րից նոր հորձանքով արյունը յեռաց նրա ներ-  
սում և նա թուրն Աչեյի մազերի արանքից սեղ-  
մեց մեյվանի դոչին: Մեյվանը ցավից շուռ  
յեկավ, ընկավ մեջքին, Չոզանն ավելի ուժով  
սեղմեց՝ ու թուրը ծակեց անցավ կուրծքը:





հասավ դռչակին, են ել ծակեց անցավ ու ամ-  
րացավ գետնին:

Չոզանը զովացած խորը շնչեց ու նայեց  
Աշեյին: Աշեն որ մեյվանի շարժումից արդեն  
զարթնել էր նստեց անկողնում ու անդիտակ  
նայեց չորս կողմը, նայեց Չոզանի ինքնա-  
բավական դեմքին ու դեռ ջեր նայել մեյվանին  
վոր տաք արյունն արդեն խտուտեց իր կողքը:  
Աշեն սթափվեց նայեց իր կարոտով գրկած Մա-  
մեյին, նրա դռչին զցված թրին ու ամեն ինչ  
հասկացավ:

Հետո Աշեն նայեց Չոզանին, ապա ծուփ  
մազերը թափով գցեց իր դեմքին ու մաղ-  
կըտաց:

— Այ մեր, իմ իգիթ Մամեն յոթ տարի  
կովով, չսպանվով, բսկի բրինդար չեղավ, ես  
ինչ արիք դու, հա՞:

Ու Չոզանն ել հասկացավ, հասկացավ որ  
Աշեն են Աշեն եր, որ դիք եր պահել Մամեյի  
քոլոզը, Մամեյի, որ ենպես անմուրազ մնաց-  
մուրազով պահած մոր ձեռքից: Ու Չոզանը  
դուրս քաշեց թուրը տղայի դռչից, արյունը  
նոր հոսանքով դուրս ժայթքեց. Չոզանը բն-  
կավ այդ դռչին ու արյունը ներկեց նրա  
դեմքը...

— Ախ Մամե, — վողբաց Չոզանը, — Մամե,  
Մամե, քո մեր յեթիմ ա, քո մեր մալուլ ա,  
Մամե, Մամե... Քո մեր դալուլ ա, քո մեր դա-  
լուլ ա, Մամե, Մամե... Ախ, տղիս արյունը





ծով ա... Մամե, վո՞ր դուչմանը քո իգիթ դո-  
չից ենպես արյուն կքաչեր, հա՞ Մամե ջան,  
Մամե: Ախ իմ անբախտ ու անմուրազ մա-  
մե... Գո դայեն թող իր ծամեր կտրա Մամե.  
Մամե. թող աշխարհ ու ալամ քո ուրան<sup>1)</sup> մոր  
դարդն իմանա, Մամե, Մամե, Մամե...

Աչեն ել ձենը խառնեց մոր ձենին, վող-  
բաց որ ու գիշեր:

Ու յերբ Զոզանի ու իր արցունքները չոր-  
ցան, թարու<sup>2)</sup> շինեց, սիրած մոր ձեռքով  
սպանված տղին նրա մեջը դրավ. թարուն բարձ  
բացրեց իր հերոսակա<sup>3)</sup> պինդ ուսին, յոթն  
արևի փաթ վողբալով, մահալից մահալ ման  
ածեց ապա հանեց բարձր սարի ամենաբարձր  
կատարին ու թաղեց արծիվների բնի մոտ, վոր  
են արծիվներն ամեն որ բարձրից նայեն աշ-  
խարհին, տեսնեն Աչեյին, են Աչեյին, վոր  
յոթ տարի Մամեյի քոլոզը դիջ պահեց ու  
ելի կը պահի, վոր Մամեն չհրոկի ու սիրտ  
լի չկտորի...



1) Վորբ

2) Դագալ



**ՍԻՐԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**


Սուաջին գիրք.— ՀԱՐՑՐԵՔ ՆՐԱՆՑ (վեպ)  
1931 թ. Մոսկվա. ԽՍՀՄ Ժողովուրդների հրատարակչություն (սպառված).

Յեղրորդ գիրք.— ԿՅԱՆՔԻ ԿԱՐՈՏԸ (շուտով լույս կը տեսնի):

- 1. Յեռացող կաթսան
- 2. Նվերը
- 3. Կյանքի կարողը
- 4. Գարնան ծաղիկներ
- 5. Արծիվն ու վորդը (պուեցաղներգութ.)
- 6. Մամեն ու Աշեն
- 7. Ասմար
- 8. Թալիսման

**ՊԱՏՐԱՍ Ե ՏՊԱԿՐՈՒԹՅԱՆ**

Յերրորդ գիրք.— ՄԱՆՅԱԿ (վեպ)  
Չորրորդ գիրք.— ՅԵՍԹԵՐ (վրպակ)





THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

530 SOUTH EAST ASIAN AVENUE

CHICAGO, ILLINOIS 60607

TEL: 773-936-3700 FAX: 773-936-3701

WWW.PHYSICS.UCHICAGO.EDU

1999

PHYSICS 309

LECTURE NOTES

BY

PHYSICIST

PHYSICIST

PHYSICS 309

LECTURE NOTES

BY



« Ազգային գրադարան



NL0360714



55396

9.504.

4.504